

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ



ԳՆԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Երևան քաղաքի առաջին աստիճանի
ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր*

DOI: 10.59560/18291155-2023.1-83

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում է այն հարցը, թե արդյոք անձնական տվյալների գաղտնիությունը ենթակա է ավելի խիստ սահմանափակումների, քան պահանջում են սահմանադրական նորմերը և այլ օրենսդրական ակտերը, որոնք երաշխավորում են արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը: Հետազոտությամբ ընդգծվել է գաղտնիության իրավունքի սահմանափակումների պատշաճ հավասարակշռության պահպանման կարևորությունը, ինչը բարդ և կարևոր իրավական խնդիր է: Հոդվածում ուսումնասիրվում է գաղտնիության հայեցակարգը իրավական և գաղտնիության իրավունքի պաշտպանության պատմական զարգացման տեսանկյունից: Որպես անձնական տվյալների պաշտպանությունը երաշխավորող իրավական ակտերի օրինակ է բերվում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան: Ուսումնասիրությունը շեշտում է, որ անձնական տվյալների սահմանափակումը պետք է համապատասխանի օրենքին և չխախտի մարդու հիմնարար իրավունքները:

Հոդվածն այնուհետև անդրադառնում է արդար դատաքննության իրավունքին և ընդգծում, որ հրապարակային դատաքննության իրավունքը դրա անբաժանելի մասն է: Դատավարությունը կարող է իրականացվել դատարանի որոշմամբ դռնփակ ռեժիմով՝ դատավարության մասնա-

կիցների անձնական կյանքը, անչափահասների շահերը կամ արդարադատությունը, ինչպես նաև պետական անվտանգությունը, հասարակական կարգը կամ բարոյականությունը պաշտպանելու համար: Ուսումնասիրությունը ներկայացնում է «գաղտնիության ողջամիտ ակնկալիքի» գաղափարը, որն առաջին անգամ ձևակերպվել և կիրառվել է ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից 1967 թվականին, և որը շատ դեպքերում լայն կիրառություն է գտել միջազգային իրավական պրակտիկայում՝ անձնական տվյալների գաղտնիության իրավունքը պաշտպանելու համար: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից սահմանված թեստը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ այնքան էլ ակնհայտ չէ, թե հանրային դատավարության ընթացքում որ տվյալները կարող են համարվել գաղտնի և հրապարակման ոչ ենթակա:

Հիմնաբառեր. անձնական տվյալներ, գաղտնիություն, արդար դատաքննություն, իրավական պաշտպանություն, հրապարակային դատաքննություն, մարդու իրավունքներ:

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ ՂԱՏԱՐԱՆ

Սույն հետազոտությամբ կարևորել ենք այն հարցադրումը, թե արդյո՞ք անձնական տվյալների գաղտնիությունն արդար դատաքննության իրավունքի կարգավորման տիրույթում չի ենթարկվում անհարկի և ավելի խիստ սահմանափակման, քան նախատեսված է նշված իրավունքի պաշտպանությունը երաշխավորող սահմանադրական հիմնադրույթներով և այլ օրենսդրական ակտերով:

«Գաղտնիություն» (private) տերմինը հաճախ է օգտագործվում ինչպես ընդհանուր բառարանաբանության իմաստով, այնպես էլ մասնագիտական, մասնավորապես՝ փիլիսոփայական, քաղաքական և իրավական ընկալումների հարթությամբ, ինչի արդյունքում այդ տերմինի համընդհանուր ճանաչում ունեցող միասնական իմաստ, սահմանում կամ բնորոշում դեռևս առկա չէ: Գաղտնիության գաղափարը պատմական խորը արմատներ ունի. նշված հայեցակարգը սկիզբ է առել հայտնի փիլիսոփայական աղբյուրներում, մասնավորապես՝ հասարակական քաղաքականության ու քաղաքական գործունեության ոլորտի (*polis*) և ընտանեկան ու մասնավոր կյանքի ոլորտների (*oikos*) միջև բաժանման

Արիստոտելյան ուսմունքից, ինչը, թերևս՝ հենց դասական հղում է հիշյալ գաղափարի մասնավոր (private) ասպեկտին¹:

Հիշյալ եզրույթի օգտագործումը բովանդակային կտրվածքով միատեսակ չէ, մասնավորապես առկա է շփոթ գաղտնիության գաղափարի նշանակության, վերջինիս արժեքի և կիրառման շրջանակի վերաբերյալ: Իրավական ասպեկտներով գաղտնիության մասին աշխատությունները հայտնվել են 1890-ականներից, իսկ դրանցում արտացոլված դիրքորոշումները գործնական հարթությամբ արմատավորվել են ամերիկյան օրենսդրությունում՝ գաղտնիության իրավունքի պաշտպանության զարգացման նկատառումով, ինչը մինչ այդ հիմնավորվում էր հիմնականում զուտ բարոյական փաստարկներով:

Առաջին անգամ գաղտնիության իրավունքի էությունը բացահայտվել է ԱՄՆ գերագույն դատարանի դատավորներ Ս. Դ. Ուորենի և Լ. Դ. Բրանդեսի կողմից, ովքեր համարվում են անձնական կյանքի անձեռնմխելիության դոկտրինի հիմնադիրները: Նրանք «The right to privacy» հասկացությունը սահմանում էին որպես *միայնակ մնալու իրավունք՝ «the right to be let alone»*²:

Գաղտնիության ապահովման նպատակով միջազգային իրավական ակտերում տեղ են գտել մի շարք կարգավորումներ և երաշխիքներ: Այդպիսի կարգավորումներ են առկա Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա), որի 8-րդ հոդվածը երաշխավորում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, սահմանում է անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքը:

ՀՀ Սահմանադրությամբ նշված իրավունքը երաշխավորված է մի քանի հոդվածներով: Մասնավորապես, Սահմանադրության 31-րդ հոդվածը երաշխավորում է մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը, 32-րդ հոդվածը՝ բնակարանի անձեռն-

¹ Տե՛ս **DeCew, Judith**, «Privacy», The Stanford Encyclopedia of Philosophy (Spring 2018 Edition), Edward N. Zalta (ed.), URL = <<https://plato.stanford.edu/archives/spr2018/entries/privacy/>>

² Տե՛ս **Warren S., Brandeis L.** The right to Privacy // Harvard Law Review, 1890, Dec. 15, p. 193:

մխելիությունը, 33-րդը՝ հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը և 34-րդը՝ անձնական տվյալների պաշտպանությունը:

Վերը նշված երկու իրավական փաստաթղթերում սահմանված իրավունքները բացարձակ չեն: Դրանցում նախատեսված են նաև այն պայմանները, որոնց առկայության դեպքում նշված իրավունքները կարող են սահմանափակվել: Ընդհանուր ձևակերպմամբ այդ իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Կոնվենցիայի 6-րդ և Սահմանադրության 63-րդ հոդվածները երաշխավորում են մեկ այլ հիմնարար իրավունքի՝ արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը, որի բաղկացուցիչ մասն է կազմում հրապարակային դատաքննության իրավունքը:

Հրապարակային դատաքննության իրավունքը ևս բացարձակ չէ, և արդար դատաքննության իրավունքը երաշխավորող վերը նշված իրավանորմով նախատեսված են նաև հրապարակային դատաքննության իրավունքի սահմանափակման դեպքերը: Այսպես՝ դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

Հրապարակայնությունը գաղտնիության հակոտնյան է, ընդ որում, հրապարակայնության պայմաններում գաղտնիության իրավունքի սահմանափակման պատշաճ հավասարակշռում ապահովելը բավականին բարդ և միևնույն ժամանակ շատ կարևոր իրավական խնդիր է, որի իրավաչափ լուծումը թույլ կտա խուսափել անձի հիմնարար իրավունքների անհարկի ու անհիմն սահմանափակումներից:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե մի կողմից անձանց գաղտնիության իրավունքի, մյուս կողմից հրապարակային դատաքննության իրավունքի սահմանափակման պայմանների առկայությունը և դրանց բովանդակությունը ապահովում է, արդյոք, բավարար հավասարակշռու-

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1(109)2023

թյուն՝ նախանշելով հանրային և մասնավոր շահերի ապահովման ողջամիտ սահմանները: Միաժամանակ, սույն հոդվածով անդրադարձ է արված այն հարցին, թե արդյո՞ք անձնական տվյալների գաղտնիությունը արդար դատաքննության իրավունքի կարգավորման տիրույթում չի ենթարկվում անհարկի և ավելի խիստ սահմանափակման, քան նախատեսված է նշված իրավունքի պաշտպանությունը երաշխավորող իրավական ակտերում:

Նշված հարցի ուսումնասիրության նպատակով հետազոտության ընթացքում օգտվել ենք իրավական գործիքից, որը գաղտնիության իրավունքի վերաբերյալ առաջին անգամ ձևակերպվել և կիրառվել է ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից 1967 թվականին մի դատական գործով, որը հետագայում լայն կիրառություն է ունեցել միջազգային իրավական պրակտիկայում նշված իրավունքի պաշտպանության բազմաթիվ գործերով: Այն առավել հայտնի է որպես Կատցի թեստ՝ «Katz test»: Նշված գործով գանգատը վերաբերում էր ԱՄՆ Սահմանադրության 4-րդ լրացմամբ երաշխավորված, կամայական խուզարկությունների և առգրավումների արգելքը պետական մարմինների կողմից խախտելու հարցին¹: Նշված գործով դատաքննության արդյունքում ԱՄՆ Գերագույն դատարանը «Katz v United States» գործով² որոշմամբ առաջ է քաշել «գաղտնիության ողջամիտ ակնկալիքի» (reasonable expectation of privacy) գաղափարը:

Ըստ գործի փաստական տվյալների՝ ոստիկանությունը, նպատակ ունենալով խափանել խաղադրույքների հետ կապված խարդախությունները, գաղտնալսում է իրականացրել հասարակական հեռախոսախցիկում, որով հեռախոսագրույցներ էր վարում բողոքաբեր Կատցը: Ստորադաս դատարանները ԱՄՆ Սահմանադրության 4-րդ լրացման խախտում չէին արձանագրել՝ նշելով, որ «դիմողի կողմից զբաղեցրած տարածքում ոչ մի ֆիզիկական անձի մուտք չի գրանցվել»:

ԱՄՆ Գերագույն դատարանը բավարարել է բողոքը՝ արձանագրելով, որ հեռախոսագրույցի ընթացքում առկա է եղել գաղտնիության ողջամիտ ակնկալիք՝ եթե անգամ այդ խոսակցությունը տեղի է ունեցել հանրային հեռախոսախցիկում: Դատարանը միաժամանակ որոշել է, որ այն ամենը, ինչ անձը գիտակցաբար բացահայտում է հանրությանը՝ անկախ գտնվելու

¹ Տե՛ս U.S. Const. amend. IV:

² Տե՛ս Katz v United States, 389 U.S. 347, 88 S.Ct. 507, 19 L.Ed.2d 576 (1967):

վայրից, չի պաշտպանվում ԱՄՆ Սահմանադրության 4-րդ լրացմամբ: Վերջինիս պաշտպանության շրջանակում լինելու համար անհրաժեշտ է, որ անձը ինչ-որ բան գաղտնի պահի:

Պարզելու համար կոնկրետ դեպքում առկա՞ է արդյոք «գաղտնիության ողջամիտ ակնկալիք»՝ սահմանվել է երկպայման թեստ.

ա) Անձը պետք է «սուբյեկտիվ» ակնկալիք ունենա, որ իր գործողությունները կամ իրերը գաղտնի կմնան:

բ) Անձը պետք է հիմնավորի, որ իր գաղտնիության սուբյեկտիվ ակնկալիքը այնպիսին է, որ հանրությունը կհամարի ողջամիտ¹:

Կատցի գործով որոշումը սկիզբ դրեց գաղտնիության իրավունքի պաշտպանությանն ուղղված մի շարք նահանգային և դաշնային նոր օրենքների մշակմանը: 1968 թվականին՝ Կատցի գործով որոշումից անմիջապես հետո, Կոնգրեսն ընդունեց «Գաղտնալսման մասին» օրենքը (Wiretap Act)՝ գաղտնիության իրավունքը պաշտպանելու նպատակով, մինևույն ժամանակ իրավապահներին հնարավորություն ընձեռելով համապատասխան պայմանների առկայության դեպքում գաղտնալսելու հեռախոսային հաղորդակցությունները²: Այնուամենայնիվ, Գերագույն դատարանը որոշում կայացրեց, որ նշված ակտն ընդգրկում է միայն հեռախոսային կամ բանավոր հաղորդակցությունների սահմանափակումները՝ կարգավորման շրջանակից բաց թողնելով մասնավոր (գաղտնի) տեղեկատվության հնարավոր լայն շրջանակը, որը ենթադրաբար կարող էր ստացվել գաղտնալսման ընթացքում³: Նշված որոշումը Կոնգրեսին «ստիպեց» ընդլայնել «Գաղտնալսման մասին» օրենքի պաշտպանության շրջանակը՝ 1986 թվականին «Էլեկտրոնային հաղորդակցությունների գաղտնիության մասին» օրենքի ընդունմամբ⁴:

Մեր կարծիքով՝ ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից առաջ քաշված թեստը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ ակնհայտ չէ, թե հրապա-

¹ Տե՛ս 68 Am.Jur.2d Searches and Seizures §9:

² Տե՛ս Omnibus Crime Control and Safe Streets Act of 1968, Pub. L. 90-351, 801, 82 Stat. 197, 212 (June 19, 1968):

³ Տե՛ս United States v. New York Telephone Co., 434 U.S. 159, 166-67 (1977); see also United States v. Seidnitz, 589 F.2d 152, 157 (4th Cir. 1978):

⁴ Տե՛ս The Electronic Communications Privacy Act of 1986, Pub. L. 99-508, 100 Stat. 1848 (Oct. 21, 1986):

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՎ

րակային դատաքննության ընթացքում ինչպիսի տվյալներ կարող են համարվել գաղտնի և հրապարակման ոչ ենթակա:

Թերևս, դատարանին վերապահված լիազորությունները, որոնց կիրառմամբ դատարանը կարող է սահմանափակել հրապարակային դատաքննության իրավունքը, կիրառվում է բավարար չափով ընդգրկուն պայմանների առկայության դեպքում, և նշված պայմանների առկայությունն ինքնին ընդգրկում է այն բոլոր իրավիճակները, երբ անձը կարող է ունենալ «գաղտնիության ողջամիտ ակնկալիք»: Սակայն գործնականում կարող են լինել նաև դեպքեր, երբ առկա չէ այնպիսի իրավիճակ, որ դատարանը կարող է իրացնել իր լիազորությունը՝ ապահովելով գաղտնի տվյալների պաշտպանությունը, սակայն անձը կարող է ունենալ «գաղտնիության ողջամիտ ակնկալիք»:

Որպես այդպիսի օրինակ կարելի է դիտարկել քրեական դատավարության ընթացքում անձի վերաբերյալ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանի ձև 8 տեղեկանքի հրապարակումը, որում նշվում են ոչ միայն անձի դատվածություն ունենալու վերաբերյալ, այլև անձի կողմից նախկինում դատապարտված լինելու (դատվածությունը մարված լինելու պայմաններում) կամ նախկինում նրա նկատմամբ ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցված լինելու կամ քրեական գործի հարուցումը մերժված լինելու մասին տվյալները: Ընդ որում, նշված տվյալները գործով որևէ հանգամանքի ապացուցման գործընթացում չեն օգտագործվում, ինչպես նաև անձի համար չեն կարող առաջացնել քրեաիրավական անբարենպաստ որևէ հետևանք¹: Դատավարական տեսանկյունից որևէ արգելք առկա չէ դատարանի համար նշված փաստաթղթին ծանոթանալու և հրապարակայնորեն հետազոտելու համար, իսկ դոնփակ դատական նիստ անցկացնելու վերաբերյալ առկա կառուցակարգերը, կարծում ենք, բավարար չափով չեն երաշխավորում նման իրավիճակներում անձանց իրավունքները:

Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանից տեղեկություններ ստանալու կարգը հաստատվել է

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածի 8-րդ մասը:

Կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 933-Ն որոշմամբ, որում, մեր կարծիքով, առերևույթ կա ներքին հակասություն: Նշված կարգի 20-րդ կետի համաձայն՝ «Օպերատիվ տեղեկատու քարտադարանից տեղեկություններ ստանալու համար հարցումները ձևակերպվում են համաձայն հետևյալ ձևերի՝

ա) պահանջագիր (օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համար (N 8 ձև),

(...):»:

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ «Օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության դատախազության մարմիններին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը (քաղաքացիներին ծառայության ընդունելու դեպքերում) տեղեկությունները տրամադրվում են՝ առաջնորդվելով սույն կարգի 5-րդ գլխում նշված ժամկետներով, եթե հարցումը կատարվել է պահանջագրով (N 8 ձև):»:

Այսինքն՝ նախատեսվում է, բացի օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից, ձև 8 տեղեկանքի տրամադրում նաև այլ մարմինների: Վերը նշվածից հետևում է, որ քրեական գործի նյութերում նշված տեղեկանքի առկայությունն ինքնին, նշված տվյալների ստացման օրինականության հետ կապված հարցեր է առաջացնում:

Կիրառելով վերը նշված՝ Կատցն ընդդեմ Միացյալ Նահանգների գործով ձևակերպված սկզբունքը՝ կարելի է հանգել հետևության.

ա) անձը նշված դեպքում կարող է ունենալ նախկինում իր կյանքի ընթացքում թույլ տրված՝ իրավական որևէ հետևանք չառաջացնող իրավախախտումների մասին տվյալների գաղտնիության ողջամիտ ակնկալիք: Նկատի ունենք այն, որ նշված տվյալը, չունենալով օրենքով նախատեսված որևէ իրավական հետևանք առաջացնող նշանակություն,

ՍԱՀՄԱՆԱՐԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 1(109)2023

կարող է դատարանի մոտ առաջացնել իր անձի վերաբերյալ ներքին բացասական համոզմունք, ինչն իր հերթին կարող է նշված անձի համար առաջացնել ոչ բարենպաստ քրեաիրավական հետևանք,

բ) նշված փաստարկը հասարակության կողմից կարող է գնահատվել որպես ողջամիտ:

Քննարկված օրինակում, փաստորեն, գործ ունենք անձնական տվյալների գաղտնիության իրավունքի անհիմն սահմանափակման հետ, որն անձի համար կարող է առաջացնել քրեաիրավական անբարենպաստ հետևանքներ, իսկ այն իրավական նորմերը, որոնք կոչված են հավասարակշռելու հանրային և մասնավոր շահը՝ այս դեպքում թերևս ոչ բավարար են կարգավորում խնդիրը:

Վերը նշված օրինակը թույլ է տալիս քննարկելու անձի արդար դատաքննության իրավունքի խախտման հարցը նաև այն տեսանկյունից, որ դատարանը, ծանոթանալով նշված տվյալին, համապատասխան նախատրամադրվածություն և տվյալ անձի համար ոչ բարենպաստ ներքին համոզմունք կարող է ձեռք բերել՝ ի խախտումն անձի գաղտնիության իրավունքի: Այսինքն՝ գաղտնիության իրավունքի խախտումը կարող է հանգեցնել նաև արդար դատաքննության իրավունքի մեկ այլ բաղադրիչի՝ անաչառ դատարանի կողմից գործի քննության իրավունքի խախտման:

Հայրենական իրավական համակարգում բացի վերը նշված խնդրից, նախկինում հանցանք կատարած անձանց վերաբերյալ անձնական տվյալների հրապարակման հետ կապված առկա են նաև բազմաթիվ այլ խնդիրներ: Նշված խնդիրներից մեկը, որը մեր կարծիքով հրատապ լուծում է պահանջում՝ «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում անձնական տվյալների հրապարակման գործընթացի չկարգավորված լինելն է, որոնց կանդրադառնանք հետագա հետազոտություններով:

Կարծում ենք, որ խնդիրը բնավ տեխնիկական չէ, ուստի հարկ է ստույգ ուրվագծել այն չափանիշները, որոնք կկանխորոշեն հրապարակման ենթակա տվյալների շրջանակը: Այդ սահմաններից ցանկացած շեղում անթույլատրելի է, քանզի քննարկվող դեպքում մրցակցության մեջ են հիմնարար այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են արդար դատաքննության իրավունքը և անձնական տվյալների պաշտպանությունը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրություն:
2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա:
3. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված 2021 թ. մայիսի 5-ին):
4. Կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 933-Ն որոշում:
5. DeCew, Judith, «Privacy», The Stanford Encyclopedia of Philosophy(Spring 2018 Edition), Edward. N. Zalta(ed.): Հասանելի է՝ <https://plato.stanford.edu/archives/spr2018/entries/privacy/> (Մուտք՝ 10.03.2023):
6. Warren S., Brandeis L. The right to Privacy // Harward Law Review, 1890, Dec. 15, p. 193:
7. U.S. Const. amend. IV.
8. Katz v United States, 389 U.S. 347, 88 S.Ct. 507, 19 L.Ed.2d 576 (1967).
9. 68 Am.Jur.2d Searches and Seizures §9.
10. [Omnibus Crime Control and Safe Streets Act of 1968](#), Pub. L. 90-351, 801, 82 Stat. 197, 212 (June 19, 1968).
9. United States v. New York Telephone Co., 434 U.S. 159, 166-67 (1977); see also [United States v. Seidnitz, 589 F.2d 152, 157 \(4th Cir. 1978\)](#).
10. [The Electronic Communications Privacy Act of 1986](#), Pub. L. 99-508, 100 Stat. 1848 (Oct. 21, 1986).

КОНФИДЕНЦИАЛЬНОСТЬ ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ В КОНТЕКСТЕ ПРАВА НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО

Аннотация

В исследовании отмечается важность поддержания соответствующего баланса ограничений права на частную жизнь в общественной сфере, что является сложной и важной правовой проблемой. В Статье

рассматривается концепция частной жизни с точки зрения правовых аспектов и исторического развития защиты права на частную жизнь. В качестве примера правовых актов, гарантирующих защиту персональных данных, упоминается Европейская конвенция о защите прав человека и основных свобод. В исследовании подчеркивается, что ограничение персональных данных должно соответствовать закону и не нарушать фундаментальные права человека.

Далее в статье рассматривается право на справедливое судебное разбирательство и отмечается, что право на публичные слушания является его неотъемлемой частью. Судебные слушания могут проводиться в закрытом режиме по решению суда с целью защиты частной жизни участников процесса, интересов несовершеннолетних или справедливости, а также государственной безопасности, общественного порядка или морали. В исследовании представлена идея «разумного ожидания частной жизни», которая была впервые сформулирована и применена Верховным судом США в отношении права на частную жизнь в 1967 году и нашла неоднократное широкое применение в международной правовой практике для защиты этого права. Автор предполагает, что тест, установленный Верховным судом США, также применим в тех случаях, когда не так очевидно, какие данные в ходе публичного судебного разбирательства могут считаться конфиденциальными и не подлежащими разглашению.

Ключевые слова: персональные данные, конфиденциальность, справедливый суд, правовая защита, публичный суд, конфиденциальность, права человека.

CONFIDENTIALITY OF PERSONAL DATA IN THE CONTEXT OF THE RIGHT TO A FAIR TRIAL

Annotation

This article discusses the question of whether the confidentiality of personal data is subjected to stricter restrictions than required by constitutional norms and other legislative acts that guarantee the protection of the right to a fair trial. The study notes the importance of maintaining an appropriate balance of restrictions on the right to privacy in public, which is a complex and

important legal issue. The article explores the concept of privacy in terms of legal aspects and the historical development of the protection of the right to privacy. The European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms is cited as an example of legal acts that guarantee the protection of personal data. The study emphasizes that the restriction of personal data should be in compliance with the law and must not violate fundamental human rights.

The article further examines the right to a fair trial and highlights that the right to a public trial is an integral part of it. Judicial proceedings may be conducted in private by a court decision in order to protect the privacy of participants in the proceedings, the interests of minors or justice, as well as state security, public order or morality. The study presents the idea of a "reasonable expectation of privacy," which was first formulated and applied by the US Supreme Court in relation to the right to privacy in 1967, and which found wide application in international legal practice in many cases for the protection of this right. The article suggests that the test established by the US Supreme Court is also applicable in cases where it is not so obvious which data in the course of a public trial can be considered confidential and not subject to disclosure.

Keywords: personal data, privacy, fair trial, legal protection, public trial, confidentiality, human rights

Հոդվածը հանձնված է խմբագրություն 13.03.2023թ., փրվել է գրախոսության 23.03.2023թ., ընդունվել է փրկագրության 03.04.2023թ.:

